# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք. Սևան

15.10.2021թ.
ժամը 10:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Դոնարա Լալազարյան
**Անդամներ՝** Մարիաննա Առաքելյան
Վարդուհի Վարդանյան
Միեր Թովմասյան
Անի Խաչատրյան
**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**
(Դ. Լալազարյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հիմնավորումների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**
(Դ. Լալազարյան)

1.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար <<**Սառնարանի կառուցման աշխատանքների**>> ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|

| | |
|---|---|
| 1 | <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ |
| 2 | <<Ղազարյան Շին>> ՍՊԸ |
| 3 | <<ԼԵՎ ՇԻՆ>> ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. <u>ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>**

(Դ. Լալազարյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **<u>www.armeps.am</u>** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ՝

**<<ԼԵՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի** հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /հավելված 1.3/:

2.3 **<<Ղազարյան Շին>> ՍՊԸ-ի** հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի /հավելված 1.3/ «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը /բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների/» 4.5 բաժնի 4.5.2 ենթաբաժնի մասնակցության տեսակի:

**<<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ի** հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի /հավելված 1.3/ 1.3.3 կետի, որը ներկայացվել է առանց հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրության, միաժամանակ հավելված 1.3 լրացվել է հրավերով սահմանված ձևին անհամապատասխան և սարքերի և սարքավորումների նկարագրի աղյուսակի /հավելված 1.1/, որը ներկայացվել է առանց լրացվելու:

**<<ԼԵՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի** հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ սարքավորումների նկարագրի աղյուսակի /հավելված 1.1/, որը ներկայացվել է առանց լրացվելու:

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշման հավելված 1-ի 41-րդ կետով որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել՝ **<<Ղազարյան Շին>> ՍՊԸ-ին, <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ին** և **<<ԼԵՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ին** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը 19.10.2021թ-ի ժամը 09:00 շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հիմնավորումների մասին.

(Դ. Լալազարյան)

5.1 Հայտերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Դ. Լալազարյան)

6.1 ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 19.10.2021թ.-ին ժամը 09:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝** Դ. Լալազարյան

**Անդամներ՝** Մ. Առաքելյան

Վ. Վարդանյան

Մ. Թովմասյան

Ա. Խաչատրյան

**Գնումները համակարգող՝** Լ. Դավթյան